

ՀԱՎԵԼՎԱԾ  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
որակավորման հանձնաժողովի  
28.03.2019թ. N 4/1-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահ՝  
Արա Զոհրաբյան

**2019 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

1. 2019 թվականի գարնան որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) համապատասխան ուսուցում անցած ունկնդիրների (**այսուհետ՝ հավակնորդների**) կողմից առձեռն կարող են ներկայացվել Փաստաբանների պալատ մինչև **2019թ. ապրիլի 12-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):
2. Որակավորման քննություններն անցկացվելու են հետևյալ հասցեներում՝ **ք.Երևան, Զաքյան 7-2 և Զաքյան 7-3** (Փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի վարչական շենք):
3. Որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **22.04.2019թ-ին ժամը 10.00-ից**: Առաջին փուլի քննությանը մասնակցելու համար հավակնորդները պետք է ներկայանան և գրանցվեն քննության օրը՝ ժամը **09<sup>00</sup>-ից** մինչև **09<sup>45</sup>**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
4. Որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **26.04.2019թ-ին և 27.04.2019թ-ին**: Երկրորդ փուլին մասնակցելու համար հավակնորդը պետք է ներկայանա ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից էլեկտրոնային փոստով կամ այլ եղանակով ծանուցված օրը (26.04.2019թ. կամ 27.04.2019թ.) և ժամին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: